

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի հոկտեմբերի 23-ին

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Հիմնական դրույթներ հիմնարկի մասին

1. Հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, դատախազությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև օրենքի հիման վրա ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթներ իրականացնող այլ պետական մարմիններին (այսուհետ՝ պետական մարմին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով: Տեսչական մարմինների պետական կառավարչական գործառույթների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով:»:

2. Հիմնարկն իր իրավասության սահմաններում, Հայաստանի Հանրապետության անունից, կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3. Հիմնարկն ունի անվանում, որը ներառում է համապատասխան պետական մարմնի անվանումը, իսկ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքում՝ նաև «աշխատակազմ» բառը:

Համայնքային կառավարչական հիմնարկի անվանումը ներառում է մարզի, համայնքի անվանումը, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմ (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) բառերը:

4. Հիմնարկի գտնվելու վայրը նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է:

5. Հիմնարկն ունի Հայաստանի Հանրապետության պետական գինանշանի պատկերով և հիմնարկի հայերեն անվանմամբ կլոր կնիք: Հիմնարկը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Հիմնարկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

7. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների հիմնարկների իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

(3-րդ հոդվածը լրաց. 30.09.08 ՀՕ-171-Ն, 08.12.11 ՀՕ-343-Ն, փոփ. 19.10.16 ՀՕ-173-Ն)

Հիմնարկի կառավարման մարմինները

Հոդված 10.

1. Հիմնարկի կառավարումն իրականացնում է հիմնադիրը, իսկ գործադիր իշխանության և այլ մարմնի հիմնարկի կառավարումը՝ նաև համապատասխան պետական մարմնի ղեկավարը (այսուհետ՝ պետական մարմնի ղեկավար):

Հիմնարկի ղեկավարումն իրականացնում է հիմնարկի գործադիր մարմնի աշխատակազմի ղեկավարը:

Համայնքային կառավարչական հիմնարկի ղեկավարումն իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ստեղծվում են կոլեգիալ խորհրդակցական մարմիններ:

Հիմնարկի կոլեգիալ խորհրդակցական մարմնի ձևավորման, գործունեության կարգը և լիազորությունները սահմանվում են հիմնարկի կանոնադրությամբ:

~~3. Տեսչական մարմինների կառավարման առանձնահատկությունները սահմանվում են «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:~~

~~(10-րդ հոդվածը լրաց. 08.12.11 ՀՕ-343-Ն, 07.04.16 ՀՕ-38-Ն)~~

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 159-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից: